«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

2 դեկտեմբերի, 2021թ. N 70 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետը, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25–րդ հոդվածի 6–րդ մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 6–րդ մասը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.23 կետը, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել Պալատի կանոնադրության 5.1.5 և 14.16.24 կետերով նախատեսված պահանջները՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների շարունակական մասնագիտական զարգացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո և կիրառվում է 2022 թվականի հունվարի 1-ին սկսվող և դրանից հետո ընկած ժամանակահատվածների համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Պալատի խորհրդի 2021 թ. հունիսի 23-ի N 46 - Լ որոշումը համարվում է անվավեր:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2021թ. դեկտեմբերի 2-ի N 70 - Լ որոշման

ԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀ ԱՆԴԱՄՆԵՐԻ

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Բովանդակություն

1. **Ընդհանուր դրույթներ** 3
2. **ՇՄԶ պահանջները** 3
3. **ՇՄԶ միջոցառումները** 4
4. **ՇՄԶ միջոցառումներին մասնակցությունը** 7
5. **ՇՄԶ պահանջների չպահպանման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները** 8

Հավելված 1 1

Հավելված 2 5

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների շարունակական մասնագիտական զարգացման կարգը մշակվել է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետի, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25–րդ հոդվածի 6–րդ մասի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 6–րդ մասի և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.23 կետի համաձայն և կարգավորում է Պալատի ֆիզիկական անձ անդամների շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ՝ ՇՄԶ) հետ կապված հարաբերությունները:

1.2. Հաշվապահների միջազգային դաշնության (International Federation of Accountants, IFAC) կրթական ստանդարտների (Handbook of International Education Pronouncements) համաձայն՝ Պալատի աուդիտոր կամ փորձագետ հաշվապահ անդամի ՇՄԶ իրականացումը հանդիսանում է Պալատի կողմից ստանձնած Հաշվապահների միջազգային դաշնության անդամակցության պարտադիր պահանջ (Statement of Memebership Obligation 2):

2. ՇՄԶ պահանջները

2.1. Պալատի անդամ աուդիտորները և փորձագետ հաշվապահները պարտավոր են Պալատին անդամակցելու տարվան հաջորդող տարվանից սկսած անցնել ՇՄԶ: ՇՄԶ-ի տևողությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չպետք է պակաս լինի 20 ժամից, իսկ յուրաքանչյուր երկու հաջորդական տարիների համար չպետք է պակաս լինի 80 ժամից: Սույն կարգի իմաստով 1 ժամը աստղաբաշխական ժամն է՝ 60 րոպե տևողությամբ:

2.2. ՇՄԶ-ի նպատակն է տնտեսության տարբեր բնագավառներում Պալատի անդամից պահանջվող մասնագիտական աշխատանքի բարձր ստանդարտների ապահովման համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների պարբերաբար նորացումը: Այն հնարավորություն կտա հանրությանը տրամադրել բավարար երաշխիքներ, որ Պալատի անդամը տիրապետում է հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, աուդիտի, հարկային և

մասնագիտությանն առնչվող ոլորտների վերաբերյալ մասնագիտական արդի գիտելիքներին և դրանց կիրառման հմտություններին:

3. ՇՄԶ միջոցառումները

3.1. ՇՄԶ միջոցառումներ են համարվում՝

3.1.1. Պալատի կողմից իրականացվող մասնագիտական դասընթացները, սեմինարները, խորհրդակցությունները և համանման այլ միջոցառումները:

Այս միջոցառումները համարվում են ՇՄԶ-ի համար նախատեսված՝ Պալատի գործադիր տնօրենի կողմից այդ մասին հայտարարված լինելու դեպքում.

3.1.2. Պալատի անդամ աուդիտորական կազմակերպությունների կողմից իրականացվող մասնագիտական դասընթացները, սեմինարները:

Այս միջոցառումները համարվում են ՇՄԶ-ի համար նախատեսված՝ Որակավորման հանձնաժողովի հավանությունը ստանալուց հետո: Այդ նպատակով Պալատի անդամ աուդիտորական կազմակերպությունները Որակավորման հանձնաժողովին են ներկայացնում իրականացվող միջոցառումների ծրագիրը (ներառյալ՝ թեմաները, տևողությունը և դրանց արդյունքում ակնկալվող ձեռքբերվելիք գիտելիքները և/կամ հմտությունները).

3.1.3. ՀՀ այլ կազմակերպությունների (այդ թվում՝ ԲՈՒՀ-երի) կողմից իրականացվող մասնագիտական դասընթացները, սեմինարները:

Այս միջոցառումները համարվում են ՇՄԶ-ի համար նախատեսված՝ Որակավորման հանձնաժողովի հավանությունը ստանալուց հետո: Այդ նպատակով կազմակերպությունները Որակավորման հանձնաժողովին են ներկայացնում.

ա) միջոցառումների իրականացման փորձի վերաբերյալ տեղեկանք, և

բ) միջոցառումների ծրագիրը (ներառյալ՝ թեմաները, տևողությունը և դրանց արդյունքում ակնկալվող ձեռքբերվելիք գիտելիքները և/կամ հմտությունները).

3.1.4. Աշխարհում (ըստ հասույթի) առաջին տասնյակի մեջ ներառված (https://www.internationalaccountingbulletin.com/country-surveys/) միջազգային աուդիտորական և հաշվապահական կազմակերպու-թյունների ցանցի անդամ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների

կողմից Պալատի անդամ աուդիտորական կազմակերպությունների աշխատակիցների համար իրականացվող մասնագիտական դասընթացները, սեմինարները:

Այս միջոցառումները համարվում են ՇՄՋ-ի համար նախատեսված՝ Որակավորման հանձնաժողովի հավանության դեպքում: Այդ նպատակով կազմակերպությունները, մասնակիցները կամ այլ շահագրգիռ կողմեր Որակավորման հանձնաժողովին են ներկայացնում միջոցառումների ծրագիրը (ներառյալ՝ թեմաները, տևողությունը և դրանց արդյունքում ակնկալվող ձեռքբերվելիք գիտելիքները և/կամ հմտությունները).

3.1.5. Օտարերկրյա կամ միջազգային կազմակերպությունների (այդ թվում՝ ԲՈՒՀ-երի) կողմից իրականացվող մասնագիտական դասընթացները, սեմինարները, խորհրդակցությունները և համանման այլ միջոցառումները:

Այս միջոցառումները համարվում են ՇՄՋ-ի համար նախատեսված՝ Որակավորման հանձնաժողովի հավանության դեպքում: Այդ նպատակով մասնակիցները կամ այլ շահագրգիռ կողմեր Որակավորման հանձնաժողովին են ներկայացնում միջոցառումների ծրագիրը (ներառյալ՝ թեմաները, տևողությունը և դրանց արդյունքում ակնկալվող ձեռքբերվելիք գիտելիքները և/կամ հմտությունները).

3.1.6. Պալատի խորհրդի, մասնագիտական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի աշխատանքներում մասնակցությունը.

3.1.7. Պալատի որակավորման քննությունների քննական փաթեթների կազմումը և վերանայումը, քննական աշխատանքների գնահատումը.

3.1.8. Պալատի որակավորման քննությունների ծրագրի առարկաների դասավանդումը.

3.1.9. ԲՈՒՀ-երում մասնագիտական առարկաների դասախոսությունը.

3.1.10. Մասնագիտական գրքերի, հետազոտությունների կամ հոդվածների պատրաստումը, մասնագիտական ուսումնամեթոդական նյութերի, մասնագիտական ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակումը, մասնագիտական նոր ստանդարտների և գործող ստանդարտներում փոփոխությունների թարգմանությունների իրականացումը, խմբագրումը և վերանայումը:

Այս միջոցառումները համարվում են ՇՄՋ-ի համար նախատեսված՝ Որակավորման հանձնաժողովի հավանության դեպքում: Այդ

նպատակով մասնակիցները (հեղինակները, մշակողները, թարգմանողները, խմբագրողները, վերանայողները) Որակավորման հանձնաժողովին են ներկայացնում համապատասխան գրքերի, հետազոտությունների կամ հոդվածների, ուսումնամեթոդական նյութերի, իրավական ակտերի, նոր ստանդարտների և գործող ստանդարտներում փոփոխությունների օրինակները կամ համացանցային կայքերի հղումները, որտեղ դրանք հասանելի են:

3.2. ՇՄՋ-ի առարկա են հանդիսանում՝

3.2.1. հաշվապահական հաշվառումը (ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ամբողջական ՖՀՄՍ-ներ և ՓՄԿ-ների ՖՀՄՍ) և մասնավոր հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտեր, հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներ և հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտեր),

3.2.2. աուդիտորական գործունեությունը և ներքին աուդիտը (աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներ, մասնագիտական էթիկայի կանոնագիրք, ներքին աուդիտի ստանդարտներ, աուդիտորական գործունեությունը և ներքին աուդիտը կարգավորող նորմատիվ իրավական ակտեր, Պալատի ներքին իրավական ակտեր),

3.2.3. կառավարչական (ինքնարժեքի) հաշվառումը, այլ միջազգային ստանդարտներով, իրավական ակտերով կամ կանոնակարգերով պահանջվող այլ հաշվառումն ու հաշվետվությունները,

3.2.4. հարկային և մաքսային օրենսդրությունը և հարկային հաշվառումը,

3.2.5. ֆինանսների (այդ թվում՝ հանրային և/կամ պետական) կառավարումը, ռազմավարական կառավարումը, կորպորատիվ կառավարումը,

3.2.6. տնտեսական իրավունքը.

3.2.7. թվային կառավարում, էթիկա և հաղորդակցություն:

4. ՇՄԶ միջոցառումներին մասնակցությունը

4.1. ՇՄԶ միջոցառումներին մասնակցություն է համարվում Պալատի անդամի կողմից սույն կարգի 3.1 կետում նշված ՇՄԶ միջոցառումներին մասնակցությունը:

4.2. ՇՄԶ միջոցառումները կարող են կազմակերպվել ինչպես մասնակիցների ֆիզիկապես համատեղ հավաքի ու հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ (առցանց), այնպես էլ անհատական մասնակցությամբ:

4.3. Սույն կարգի 3.1.1, 3.1.6, 3.1.7 և 3.1.8 կետերում նշված ՇՄԶ միջոցառումներին անձի մասնակցությունը հավաստվում է Պալատի կողմից տրամադրված փաստաթղթերով, որոնք կներառեն հետևյալ տվյալները՝ մասնակցի անունը, ազգանունը, ՀԳԳՀ-ն, դասընթացների (սեմինարների) թեմայի կամ ՇՄԶ այլ միջոցառման անվանումը, ժամաքանակը, իրականացման ժամանակահատվածը: Սույն կարգի 3.1.7 կետում նշված միջոցառումներին մասնակցության վերաբերյալ տվյալները լրացնելիս չպետք է հատկորոշվեն քննական առարկան և քննաշրջանը: Այդպիսի տվյալներ պարունակող ՇՄԶ հայտարարագրերին հասանելիություն պետք է ունենա միայն Պալատի անդամակցության հանձնաժողովի նախագահը (միայն ՇՄԶ հայտարարագրերի հերթական ընտրանքային ստուգման ժամանակ), ով կարող է այդ տվյալների հավաստիությունը պարզել միայն անձամբ Պալատի գործադիր տնօրենից:

4.4. Սույն կարգի 3.1.2 և 3.1.4 կետերում նշված ՇՄԶ միջոցառումներին անձի մասնակցությունը հավաստվում է Պալատի անդամ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրամադրված փաստաթղթերով, որոնք կներառեն հետևյալ տվյալները՝ մասնակցի անունը, ազգանունը, ՀԳԳՀ-ն, դասընթացների (սեմինարների) թեմայի անվանումը, ժամաքանակը, իրականացման ժամանակահատվածը:

4.5. Սույն կարգի 3.1.3 և 3.1.9 կետերում նշված ՇՄԶ միջոցառումներին անձի մասնակցությունը հավաստվում է այդ կազմակերպությունների կողմից տրամադրված փաստաթղթերով, որոնք կներառեն հետևյալ տվյալները՝ մասնակցի անունը, ազգանունը, ՀԳԳՀ-ն կամ ՀԾՀ-ն, կամ անձնագրի համարը, դասընթացների (սեմինարների) թեմայի կամ ՇՄԶ միջոցառման անվանումը, ժամաքանակը, իրականացման ժամանակահատվածը:

4.6. Սույն կարգի 3.1.5 և 3.1.10 կետերում նշված ՇՄԶ միջոցառումներին անձի մասնակցությունը հավաստվում է տվյալ անձի կողմից տրամադրված փաստաթղթերով:

4.7. ՇՄԶ միջոցառումներին մասնակցության ժամերի հաշվարկման կարգը ներկայացված է սույն կարգի Հավելված 1-ում:

4.8. Պալատին անդամակցելու տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար ՇՄԶ միջոցառումներին մասնակցելու վերաբերյալ գրանցումները (այսուհետ՝ գրանցումներ) Պալատի անդամի կողմից կատարվում են Շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումների մասնակցության հայտարարագրում (Հավելված 2) և էլեկտրոնային եղանակով ներկայացվում Պալատին՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

4.9. Գրանցումներում ներառված տվյալների արժանահավատությունը պարզելու նպատակով Պալատի համապատասխան իրավասություն ունեցող մարմնի կողմից Պալատի անդամից կարող է պահանջվել տալ պարզաբանումներ, ինչպես նաև տրամադրել դրանք հաստատող լրացուցիչ փաստաթղթեր:

4.10. Պալատի անդամների՝ ՇՄԶ միջոցառումներին մասնակցության վերաբերյալ տեղեկությունները պահվում են յուրաքանչյուր անդամի անհատական գործում:

5. ՇՄԶ պահանջների չպահպանման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները

5.1. Սույն կարգի 2.1 կետով սահմանված պահանջների չպահպանման (բացառությամբ սույն կարգով նախատեսած հարգելի դեպքերի) դեպքում անձի որակավորումը չեղարկվում է:

5.2. Սույն կարգի 3.1.2 և 3.1.4 կետերում նշված Պալատի անդամ աուդիտորական կազմակերպությունների կողմից ՇՄԶ միջոցառումների մասնակից հանդիսացող անձի մասնակցության վերաբերյալ անարժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում Պալատի աուդիտորական կազմակերպություն հանդիսացող անդամների նկատմամբ կիրառվում են կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ Պալատի կողմից հաստատված Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգի համաձայն:

5.3. Սույն կարգի 3.1.3 և 3.1.9 կետերում նշված կազմակերպությունների կողմից ՇՄԶ միջոցառումների վերաբերյալ անարժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում այդ կազմակերպության կողմից ՇՄԶ միջոցառումներ իրականացնելու Պալատի համապատասխան մարմնի հավանությունը կամ միջոցառումը որպես ՇՄԶ ճանաչումը չեղարկվում է 5 տարի ժամկետով:

5.4. Անձի կողմից ՇՄԶ պահանջների չպահպանումը հաշվետու տարում կարող է Պալատի Անդամակցության հանձնաժողովի որոշմամբ համարվել հարգելի

հիվանդության (իր կամ ընտանիքի անդամի), հղիության կամ զինծառայության մեջ գտնվելու, արտակարգ և նմանատիպ այլ դեպքերում:

Հավելված 1

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության
աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների շարունակական մասնագիտական զարգացման կարգի

ԿԱՐԳ

ՇՄԶ միջոցառումներին մասնակցության ժամերի հաշվարկման

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Պալատի անդամի կողմից ՇՄԶ միջոցառումներին մասնակցության ժամերի հաշվարկման կարգը:

ՇՄԶ միջոցառման		**ՇՄԶ միջոցառմանը մասնակցության համար հաշվարկվող ժամեր**[1]	**Հիմնավորող փաստաթուղթ**
կոդ	**Անվանում**		
1	Պալատի կողմից իրականացված մասնագիտական դասընթացներին և սեմինարներին մասնակցություն, բացառությամբ Պալատի որակավորման քննությունների ծրագրի առարկաների	Դասընթացներին, սեմինարներին մասնակցության ժամերի չափով	Պալատի աշխատակազմի կողմից վարվող գրառումները

[1] Թվային կառավարման, էթիկայի և հաղորդակցության թեմաներով դասընթացներին, սեմինարներին և այլ միջոցառումներին մասնակցության դեպքում ՇՄԶ միջոցառմանը մասնակցության համար հաշվարկվող ժամերը չեն կարող գերազանցել տարեկան 15 ժամը:

	դասընթացների		
2	Պալատի կողմից իրականացված խորհրդակցություններին և համանման այլ միջոցառումներին մասնակցություն (վարող, զեկուցող, մասնակից)	Յուրաքանչյուր խորհրդակցության և համանման այլ միջոցառման մասնակցության ժամերի չափով, բայց ոչ ավելի, քան 2 ժամ և տարեկան ոչ ավելի, քան 15 ժամ	Պալատի աշխատակազմի կողմից վարվող գրառումները
3	Պալատի անդամ աուդիտորական կազմակերպությունների կողմից իրականացված մասնագիտական դասընթացներին և սեմինարներին մասնակցություն (դասախոս, սեմինար վարող, մասնակից, ունկնդիր)	Դասընթացներին, սեմինարներին մասնակցության ժամերի չափով, բայց ոչ ավելի, քան տարեկան 15 ժամ	Աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված փաստաթուղթը
4	ՀՀ այլ կազմակերպությունների (այդ թվում՝ ԲՈՒՀ-երի) կողմից իրականացված մասնագիտական դասընթացներին և սեմինարներին մասնակցություն (դասախոս, սեմինար վարող, մասնակից, ունկնդիր)	Դասընթացներին, սեմինարներին մասնակցության ժամերի չափով, բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր կազմակերպության գծով՝ տարեկան 15 ժամ	Կազմակերպությունների կողմից տրված փաստաթուղթը
5	Աշխարհում (ըստ հասույթի) առաջին տասնյակի մեջ ներառված միջազգային աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների ցանցի անդամ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից Պալատի անդամ աուդիտորական	Դասընթացներին, սեմինարներին մասնակցության ժամերի չափով, բայց ոչ ավելի, քան տարեկան 30 ժամ	Աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված փաստաթուղթը (ընդ որում՝ առցանց մասնակցության դեպքում՝ համակարգչից ֆոտոպատճեն կամ

	կազմակերպությունների աշխատակիցների համար իրականացվող մասնագիտական դասընթացներին, սեմինարներին մասնակցություն, այդ թվում՝ էլեկտրոնային հարթակներով իրականացվող		էլեկտրոնային եղանակով տրված հավաստագիր)
6	Օտարերկրյա կամ միջազգային կազմակերպությունների (այդ թվում՝ ԲՈՒՀ-երի) կողմից իրականացված մասնագիտական դասընթացներին, սեմինարներին, խորհրդակցություններին և համանման այլ միջոցառումներին մասնակցություն (դասախոս, վարող, զեկուցող, մասնակից, ունկնդիր)	Մասնակցության ժամերի չափով, բայց՝ - առկա մասնակցության դեպքում՝ ոչ ավելի քան, տարեկան 30 ժամ - առցանց մասնակցության դեպքում՝ ոչ ավելի քան, տարեկան 15 ժամ	Մասնակցությունը հիմնավորող փաստաթուղթը (ընդ որում՝ առցանց մասնակցության դեպքում՝ համակարգչից ֆոտոպատճեն կամ էլեկտրոնային եղանակով տրված հավաստագիր)
7	Պալատի խորհրդի, մասնագիտական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի աշխատանքներում մասնակցություն	Մասնակցության ժամերի չափով, բայց ոչ ավելի, քան տարեկան 10 ժամ	Պալատի աշխատակազմի և (կամ) մասնագիտական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի ղեկավարների կողմից տրված փաստաթուղթը
8	Պալատի որակավորման քննությունների քննական փաթեթների կազմում	Մեկ առարկայի գծով՝ 8 ժամ	Պալատի աշխատակազմի կողմից տրված փաստաթուղթը
9	Պալատի որակավորման քննությունների քննական փաթեթների վերանայում կամ	Մեկ առարկայի գծով՝ 3 ժամ	Պալատի աշխատակազմի կողմից տրված փաստաթուղթը

	քննական աշխատանքների գնահատում		
10	Պալատի որակավորման քննությունների ծրագրի առարկաների և ԲՈՒՀ-երում մասնագիտական առարկաների դասախոսություն	Դասախոսության ժամերի չափով, բայց ոչ ավելի, քան տարեկան 15 ժամ	Պալատի կամ ԲՈՒՀ-ի կողմից տրված փաստաթուղթը
11	Մասնագիտական գրքերի, հետազոտությունների կամ հոդվածների պատրաստում, մասնագիտական ուսումնամեթոդական նյութերի մշակում	Մեկ տպագիր էջը՝ 1 ժամ, տարեկան առավելագույնը՝ 20 ժամ	Գրքերի, հոդվածների և այլ նյութերի պատճենները
12	Մասնագիտական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակմանը մասնակցություն	Մասնակցության ժամերի չափով, բայց ոչ ավելի, քան տարեկան 15 ժամ	Իրավական ակտի նախագիծը և իրավական ակտի նախագիծը մշակող մարմնից հավաստումը
13	Մասնագիտական նոր ստանդարտների և գործող ստանդարտներում փոփոխությունների թարգմանությունների իրականացումը, խմբագրումը և վերանայումը	Մեկ տպագիր էջը՝ 1 ժամ, տարեկան առավելագույնը՝ 20 ժամ	Թարգմանությունների նյութերի պատճենները

Հավելված 2

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության
աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների շարունակական մասնագիտական զարգացման կարգի

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՇՄԶ միջոցառումների մասնակցության

Մասնակցի անուն, ազգանուն _____

Մասնակցի ՀԳԳՀ (Որակավորման վկայականի համար) _____

Հաշվետու տարի _____

Աղյուսակ 1

ՇՄԶ միջոցառման		Միջոցառում իրականացնող կազմակերպություն	Ամսաթիվ (ժամանակա-հատված)	Տևողություն (ժամ)		Հիմնավորող փաստաթուղթ
կոդ	անվանում			Ընդհանուր	ՇՄԶ միջոցառման մասնակցության համար հաշվարկվող	

Ընդամենը՝ հաշվետու տարի						

Աղյուսակ 2

	ՇՄՀ միջոցառման մասնակցության համար հաշվարկված տևողություն (ժամ)
Նախորդ տարում[2]	
Հաշվետու տարում	
Ընդամենը	

Պարտավորվում եմ սույն հայտարարագրում նշված ժամանակաշրջանի ավարտից հետո առնվազն 3 տարի պահպանել հայտարարագրում ներառված՝ ՇՄՀ միջոցառումներին մասնակցությունը հիմնավորող (հաստատող) փաստաթղթերը և դրանք ըստ պահանջի ներկայացնել Պալատին:

_____ _____

Ստորագրություն Ամսաթիվ

[2] 2021թ. համար տեղեկատվությունը չի լրացվում: